

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգին ուղղված ծախսերի հիմնական նպատակը համակարգի ծառայողների կողմից հանրության համար առավել մատչելի, որակյալ և անաչառ ծառայությունների մատուցման համար նախադրյալների ստեղծումն է: Դրանց շարքին կարելի է դասել համակարգի ծառայողների ֆինանսական և իրավական պաշտպանվածությունն ապահովող երաշխիքների արմատավորումը:

ՀՀ արդարադատության նախարարության հիմնական խնդիրներն են.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման ու համակարգման ապահովումը.

բ) իրավական ակտերի պետական իրավական փորձաքննության եւ պետական գրանցման ապահովումը.

գ) իրավական ակտերի պաշտոնական թարգմանության, հրատարակման եւ վերահրատարակման ապահովումը.

դ) օրենսդրական, գերատեսչական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիայի, հաշվառման եւ դասակարգման ապահովումը.

ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման գործունեության ապահովումը.

զ) նոտարական գործունեության ապահովումը.

է) Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց՝ (բացառությամբ բանկերի եւ վարկային կազմակերպությունների), իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների եւ հիմնարկների, անհատ

ձեռնարկատերերի, հասարակական միավորումների եւ օրենքով նախատեսված այլ կազմակերպությունների պետական գրանցման ու հաշվառման ապահովումը.

ը) հասարակական միավորումների եւ օրենքով նախատեսված այլ կազմակերպությունների, ինչպես նաեւ զանգվածային լրատվության միջոցների հաշվառման նկատմամբ վերահսկողության ապահովումը՝ օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով.

թ) սնանկության գործերով կառավարիչների որակավորման կազմակերպում եւ իրականացում.

ժ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի գործունեության ու միջազգային կապերի իրավական ապահովումը, միջպետական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի իրավական պաշտպանության աշխատանքներին մասնակցությունը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության շահերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ներկայացնելը.

ժա) Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությամբ, ինչպես նաև «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված իրավասությունների ապահովումը.

ժբ) Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի, ինչպես նաեւ միջնորդ դատարանների վճիռների եւ օտարերկրյա արբիտրաժային որոշումների հարկադիր կատարման ապահովումը.

ժգ) դատական փորձաքննությունների ապահովումը.

ժդ) «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին եւ այլ իրավական ակտերին համապատասխան՝ վարչական վարույթի ապահովումը.

ժե) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգի մասնագետների վերապատրաստման, վերաորակավորման՝ մասնագիտական որակավորման բարձրացման, հատուկ ծառայողների վերապատրաստման ու ուսուցման ապահովումը.

ժգ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացման ապահովումը.

ի) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության ապահովումը.

իա) դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության ապահովումը.

իբ) քրեակատարողական ծառայության գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության ապահովումը.

իգ) իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության ապահովումը.

իդ) դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու օրենքով նախատեսված լիազորության իրականացման ապահովումը:

Վերոհիշյալ խնդիրների իրագործման նպատակով 2014 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունը պետական բյուջեից ֆինանսավորվել է հետևյալ ծրագրերի գծով.

- Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարների աշխատակազմերի պահպանում/,

- Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի պահպանում/,

- ՔԿԱԳ ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում,

- Փորձաքննությունների ծառայություններ,

- Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանում,

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր,
 - Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանում,
 - Քրեկատարողական համակարգի պահպանում,
 - Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ,
 - Թարգմանչական ծառայություններ,
 - Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը,
 - ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում,
 - Վերապատրաստման ծառայություններ,
 - Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ:
- Այժմ անդրադառնանք նշված ծրագրերից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

01.01.01.04 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

Նախարարների աշխատակազմերի մասով /01.01.01.04/ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել է 107417.40 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 106051.32 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 106041.35 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 106995.71 հազ. դրամ: 2015 թվականի գործունեության արդյունքում այս ծրագրի գծով պարտքեր չեն առաջացել:

Նախատեսված գումարներից տնտեսվել 1366.08 հազ. դրամ, ինչը պայմանավորված է ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ, ինչպես նաև թափուր հաստիքներով:

2014 թվականին նշված ծրագրով դրամակղային ծախսը կազմել է 81282.30 հազ. դրամ: 2015 թվականի դրամակղային ծախսի մոտավորապես 30.5% աճը պայմանավորված է 2015 թվականի կատարված վերջնահաշվարկների և թափուր հաստիքների համալրմամբ:

01.01.01.05 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

Նախարարությունների աշխատակազմերի մասով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 1030105.50 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 1004288.19 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 1002361.07 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1002669.18 հազ. դրամ: Նախատեսված գումարներից տնտեսվել է 27744.43 հազ. դրամ, ինչը պայմանավորված է նախատեսվածից ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ, ինչպես նաև անվանացանկով նախատեսված որոշ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար չեն կնքվել պայմանագրեր:

«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների

աշխատակազմերի մասով/» ծրագրի գծով 01.01.2016 թվականի դրությամբ կրեդիտորական պարտքը՝ 6453.60 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքերը պայմանավորված են այն հանգամանքով, որ 2015թ. դեկտեմբեր ամսվա հեռախոսակապի, ջրամատակարարման, բնական գազի և էլեկտրական էներգիայի մատակարարման ծախսի վճարումները կարող էին կատարվել միայն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց, այսինքն՝ դեկտեմբեր ամսվա կոմունալ ծախսերը ենթակա են վճարման փաստացի մատուցված ծառայությունների դիմաց: Աշխատողներին աշխատավարձեր և հավելավճարներ /4111/ հոդվածով ձևակերպված 312.74 հազ. դրամ կրեդիտորական պարտքը գոյացել է տարեվերջին վերահաշվարկված եկամտային հարկի և սոցիալական վճարների մասով:

Նախարարությունների աշխատակազմերի մասով /01.01.01.05/ ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 767815.40 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 751428.50 հազ. դրամ:

2014 թվականի նկատմամբ 2015 թվականի դրամարկղային ծախսի 33.39%-ի չափով աճը պայմանավորված է այն հանգամանքով 2014 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի համար է հաշվարկվել և վճարվել բարձրացված աշխատավարձ, իսկ 2015 թվականին ամբողջ տարվա համար:

01.01.01.11 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման կարողությունների զարգացում /նախարարությունների աշխատակազմերի պահպանում/

Այս ծրագրով «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսվել է 2000.0 հազ. դրամ արտասահմանյան գրականություն ձեռք բերելու նպատակով: Նշված ծրագրով 2014-2015 թվականներին ֆինանսավորումը չի իրականացվել, քանի որ անվանացանկով նախատեսված արտասահմանյան գրականության ձեռքբերման համար պայմանագրեր չեն կնքվել:

**01.03.01.03 ՔԿԱԳ ծառայության գործունեության կազմակերպման
բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված
լիազորությունների իրականացման ֆինանսավորում**

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է 320375.80 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 319993.80 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 316001.74 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 315771.50 հազ. դրամ: ՔԿԱԳ տարածքային բաժինների պահպանման ծախսերից 3992.06 հազ. դրամ վարչական տարածքների ղեկավարների կողմից 28.12.2015թ. ետ է վերադարձվել արդարադատության նախարարության համապատասխան հաշվին, որից էլ այն վերադարձվել է պետական բյուջե:

2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 252544.35 հազ. դրամ, 25.1 % աճը պայմանավորված է 2014 թվականի հուլիս 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

**03.03.01.02 Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող
ծառայության պահպանում**

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 1428734.60 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 1403458.94 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 1403458.94 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1394883.44 հազ. դրամ:

2014 թվականին նշված ծրագրով դրամարկղային ծախսը կազմել է 1003836.97 հազ. դրամ: 2015 թվականի դրամարկղային ծախսի մոտավորապես 39.8% աճը պայմանավորված է 2014 թվականի հուլիս 1-ից աշխատավարձերի բարձրացմամբ:

03.05.01.01 Քրեակատարողական համակարգի պահպանում

Ծառայության հիմնական խնդիրներն են՝ կազմակերպել քրեական պատիժների կատարման կապակցությամբ դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և որոշումների կատարումը, կալանավորվածներին կալանքի տակ պահելը, ինչպես նաև դատապարտյալների և կալանավորվածների փոխադրումներին աջակցելը, քրեակատարողական հիմնարկներում օրինականության, այնտեղ պահվող ազատազրկվածների, ինչպես նաև դրանց տարածքում գտնվող անձնակազմի և քաղաքացիների անվտանգության, դատապարտյալների և կալանավորվածների կյանքի և առողջության պահպանման, անհատական, կրթական և մշակութային զարգացման պայմանների ապահովումը, դատապարտյալների և կալանավորվածների սոցիալ-հոգեբանական վերականգնումը, աջակցությունն իրավապահ մարմիններին՝ հանցագործությունների կանխարգելման և բացահայտման աշխատանքներում, ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների գործունեության համակարգումը:

2015 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի հիմնական խնդիրը կալանավորված և դատապարտված անձանց քրեակատարողական հիմնարկներում պահելու նյութական, ներառյալ՝ սննդամթերքով ապահովելու, կենցաղային, բուժսպասարկման և այլ պայմանները մարդու իրավունքների ասպարեզում գոյություն ունեցող և համընդհանուր ընդունելության արժանացած միջազգային փաստաթղթերի դրույթներին և չափանիշներին համապատասխան իրականացնելն է՝ ելնելով Եվրոպայի խորհրդին անդամակցելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից, մասնավորապես Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով եվրոպական կոմիտեի (CPT) առաջին

այցելության վերաբերյալ ներկայացված զեկույցում ներառված դիտողություններից ու առաջարկություններից:

Օրինակ՝ մինչ այժմ կալանավորված կամ դատապարտված մեկ անձին հատկացվում է 2.8քմ մակերեսով բնակելի տարածք, մինչդեռ վերոհիշյալ չափանիշներին համապատասխան՝ մեկ անձի հաշվարկով բնակելի տարածության նվազագույն չափը 4 քմ է:

Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալները մեծամասամբ բնակվում են հանրակացարանային պայմաններում, մինչդեռ պատժի անհատականացման սկզբունքն իրականացնելու անհրաժեշտությունը թելադրում է, որպեսզի քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալները փոքր խմբերով պահվեն առանձին խցերում՝ հաշվի առնելով վերջիններիս համատեղելիությունը՝ յուրաքանչյուր խցում ապահովելով առանձնացված սանհանգույց և այլն: Բացի այդ, ֆինանսական միջոցների անբավարարության հետևանքով տարիներ շարունակ քրեակատարողական հիմնարկները կապիտալ վերանորոգման չեն ենթարկվել, ինչի արդյունքում շենքերը գտնվում են անմխիթար վիճակում և կապիտալ վերանորոգման կարիք ունեն :

2015 թվականի ընթացքում քրեակատարողական համակարգի պահպանման ծրագրերում հիմնական գերակայությունը շարունակում են մնալ կապիտալ ծախսերը, որոնք ներառում են կապիտալ ակտիվների, ապրանքների ռազմավարական և արտակարգ պաշարների, ոչ նյութական ակտիվների ձեռք բերման համար նախատեսված ծախսերը՝ իր բաղկացուցիչ մասերով, կապիտալ ներդրումների ծախսեր՝ կապիտալ շինարարության, նախագծանախահաշվային և երկրաբանահետախուզական ծախսեր:

« 2015 թվականի պետական բյուջեի 03.05.01 <<01.Քրեակատարողական համակարգի պահպանում>> ծրագրով բյուջետային հատկացումների ճշտված պլանը կազմել է 10,397,466.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 10,342,244.55 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝

10339652.3 հազար դրամ: Դրամարկղային ծախսի շեղումը փաստացի ֆինանսավորման նկատմամբ կազմում է 2,592.25 հազար դրամ, որը տարեվերջին վերադարձվել է պետական բյուջե: Նշված ծրագրով 2014 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 9231304.3 հազար դրամ, որից 1000000.0 հազ. դրամը կապիտալ ծախսերի գծով:

2015 թվականին ՔԿ վարչությունը ֆինանսավորվել է նաև ՀՀ պետական բյուջեի 07.01.01 <<01.Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական հիվանդանոցային բուժօգնության ստացող և հատուկ խմբերի ֆիզիկական անձանց>> ծրագրով, որի տարեկան ճշտված պլանը կազմել է 43000.0 հազար դրամ, ֆինանսավորումը՝ 34995.13 հազար դրամ, դրամարկղային ծախսը՝ 30016.31 հազար դրամ, 2014 թվականի 22732.4 հազ. դրամի փոխարեն, որը պայմանավորված է 2015 թվականին պետական գնումներում ավելի շատ մրցույթների կայացմամբ:

Հանրակացարանային շենքերի մեծամասնությունը գտնվում է անմխիթար վիճակում և կարիք ունեն կապիտալ վերանորոգման: Բացի այդ, միջազգային պարտավորությունները կատարելու (Խոշտանգումների կոմիտեի զեկույցի հիման վրա) նպատակով անհրաժեշտ է հանրակացարանային տիպի շինությունները վերակառուցել խցային տիպի: 2008 թվականից կապիտալ վերանորոգումների գծով գումարներ չեն հատկացվել: Շատ ՔԿ հիմնարկների շենք-շինություններ կանգնած են անհետաձգելի կապիտալ վերանորոգումների խնդրի առջև, որոնց իրականացման հետաձգումը արդեն ժամանակի ընթացքում կպահանջի ավելի մեծ ֆինանսական ծախսեր:

Ամփոփ հաշվապահական հաշվետվությունը կազմված է քրեակատարողական ծառայության վարչության և 12 հիմնարկների հաշվետվությունների հիման վրա:

ՔԿ համակարգում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների սննդով ապահովման համար պահանջվող գումարները՝ ըստ

ՔԿ վարչության ՄԺԾ ծրագրի Հայտի համաձայն /ՀՀ կառավարության որոշումներով սահմանված նորմաներով հաշվարկած/ տալու փոխարեն, 2015 թվականին պետբյուջեի ճշտված պլանով հատկացվել է 997008.8 հազ.դրամ՝ պլանավորված 4200 կերակրվող մարդ թվաքանակի համար, որը նույնքան է որքան նախորդ տարիներին: 2014 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող կերակրվող ազատազրկվածների միջին թիվը կազմել է 3935 մարդ, որոնց օրական հատկացվել է 621 դրամի սննդամթերք, որը հնարավորություն է տվել ազատազրկվածների սննդակարգում 100%-ով ապահովել հացի, բանջարեղենի, մակարոնեղենի, ձավարեղենի, աղի, թեյի, համեմունքների, բուսական յուղի անհրաժեշտ քանակները, իսկ պանրի 17.8%-ը, ձվի՝ 65%-ը, պահածոյացված մսի՝ 78%-ը, ձկան պահածոյի՝ 7.9%-ը, խտացրած կաթի՝ 31%-ը և մրգահյութի՝ 33%-ը:

2015թ ճշտված պլանի և դրամարկղային ծախսերի համեմատականը 2014թ. նկատմամբ տնտեսագիտական դասակարգման որոշ հոդվածների գծով ունի հետևյալ տեսքը.

	Բյուջետային ծախսերը տնտեսագիտական դասակարգման հոդվածներով		Ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Դրամարկղային ծախս	Շեղում	Տարբերություն
			2015թ.	2015թ.	2014թ.	Ճշտված պլանի և դր. ծախսի միջև	դրամարկղ. ծախսերի միջև
1	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված վճարներ	4111	6322516.0	6322472.7	5767193.5	43.3	555279.3
2	Էլեկտրոէներգիայի ծախսեր	4212	544664.7	544664.7	535122.0	0.0	9542.6
3	Զրմուղ-կոյուղու վարձավճարի ծախսեր	4213	81624.1	81624.1	48692.6	0.0	32931.5
5	Ներքին գործուղման ծախսեր	4221	14190.0	14190.0	12283.6	0.0	1906.4
6	Սեփակ. տրանսպորտի պահպանման ծախսեր	4264	117895.1	117895.1	131602.5	0.0	-13707.4
7	Դեղորայք և վիրակապային նյութեր	4266	34995.1	30016.3	22732.4	4978.8	7283.9
8	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	934833.4	934833.4	931088.9	0.0	3744.6
9	Արձակման նպաստ	4729	51100.0	51100.0	76436.1	0.0	-25336.1

10	Կապիտալ շինարարության ծախսեր	5112	1949621.8	1949621.8	1000000.0	0.0	949621.8
11	Կապիտալ նորոգումների ծախսեր	5113	0.0	0.0	184789.1	0.0	-184789.1
12	Տրանսպորտ. միջոցների ձեռքբերման ծախսեր	5121	0.0	0.0	0.0	0.0	0.0
13	Վարչական սարքավ. ձեռք բերման ծախսեր	5122	41505.2	41505.2	68984.1	0.0	-27478.9
14	Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	3867.0	3867.0	0.0	0.0	3867.0

<<Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված վճարներ>> հոդվածի ավելացումը պայմանավորված 2014 թվականի հուլիսի 1-ից պետական ծառայողների աշխատավարձերի ավելացմամբ:

2015 թվականին ավարտին հասցվեց <<Արմավիր>> ՔԿ հիմնարկի կապիտալ շինարարության ամբողջ ծավալը, որի համար հատկացվել էր 1950000.0 հազար դրամ:

Քրեակատարողական հիմնարկների համար ձեռք են բերվել 28759.5 հազ. դրամի կահույք, 16757.3 հազ. դրամի էլեկտրոտեխնիկական և կենցաղային սարքավորումներ, 2282.4 հազ. դրամի բժշկական սարքավորումներ:

<< 2015թ. պետական բյուջեի «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակային ապահովում» ծրագրով 705 կենսաթոշակառուների կենսաթոշակների վճարման համար ներկայացվել է 712172.9 հազ. դրամի Հայտ, հաշմանդամների և կերակրողին կորցնողներին՝ 17188.6 հազ. դրամի Հայտ: 2015 թվականին թոշակավորված 69 քրեակատարողական ծառայողների վճարվել է 51100.0 հազար դրամի դրամական օգնություն:

2015թ. << պետական աշխատողներին սոցիալական փաթեթի ապահովության պետական ծրագրի շրջանակներում փաստացի հատկացված 150215.7 հազ. դրամը լրիվությամբ իրացվել է:

01.06.01.02 Փորձաքննությունների ծառայություններ

Ծրագրի նպատակն է ապահովել փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերումը պետական կարիքների համար՝ քրեական հետապնդման մարմինների որոշումների հիման վրա:

«ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Փորձաքննությունների ծառայություններ ծրագրով նախատեսվել է 145632.40 հազ. դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 145632.40 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 145632.40 հազ. դրամ:

ՀՀ 2014 թվականի կատարվել է 144874.80 հազ. դրամ դրամարկղային ծախս:

03.03.02.02 Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանում

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնություն ցույց տված փաստաբանների վարձատրության նպատակով 2015 թվականին նախատեսվել է 290834.20 հազ. դրամ, տարեկան ճշտված նախահաշիվը կազմել է 290834.20 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային 290834.20 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 295616.89 հազ. դրամ: 2014 թվականին չօգտագործված գումարը՝ 1540.72 հազ. դրամ փաստաբանների պալատի կողմից ետ է փոխանցվել պետական բյուջե 2015 թվականին:

2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 275451.90 հազ. դրամ: 2014 թվականի դրամարկղային ծախսի աճը պայմանավորված է 2014 թվականի 2-րդ կեսից աշխատավարձերի բարձրացմամբ:

08.03.02.07 Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական

ծառայություններ

Այս ծրագրով նախատեսված գումարներով իրականացվում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) ու «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության գործունեության ընթացքում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերման, ինչպես նաև «Առլիս» տեղեկատվական համակարգի պահպանման և շահագործման աշխատանքները:

2015 թվականին «Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 370239.20 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 368997.01 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 365287.72 հազ. դրամ:

2014 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 335887.22 հազ. դրամ:

01.01.01.13 «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի

պահպանում

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 23890,80 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 21989,73 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 21988,07 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 22028,07 հազ. դրամ: Բյուջեի կատարողականը դրամային արտահայտությամբ կազմում է նախատեսված տարեկան բյուջեի 92%:

Թերի իրացումների հիմնական պատճառները հետևյալն են՝

-շարունակական ծախսերի հողվածներով՝ էներգետիկ, կոմունալ, կապի ծառայությունների չիրացված գումարն է կազմում 630,80 հազ. դրամ, ինչի պատճառն է հանդիսանում այն, որ գրասենյակը գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության շենք և չի հանդիսանում առանձին բաժանորդ.

-պայմանագրային ծառայությունների ձեռքբերման հողվածով՝ չիրացված գումարը կազմել է 647,5 հազ. դրամ: Կառավարչական ծառայություններից, ինչպես նաև մասամբ համակարգչային և տեղեկատվական ծառայություններից օգտվելու անհրաժեշտություն չի առաջացել.

- ընթացիկ նորոգման և պահպանման հողվածներով՝ չիրացված գումարը կազմել է 524,0 հազ. դրամ, ինչը պայմանավորված է անվանացանկով նախատեսված աշխատանքների և ծառայությունների գնման պահանջ չառաջանալով:

- նյութեր և այլ ծախսեր հողվածներով՝ չիրացված գումարը կազմել է 100,4 հազ. դրամ: Առկա նյութերը բավականացրել են գրասենյակի գործունեության համար:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով այս ծրագրի գծով նախատեսվել է 23 833,3 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 21 120,78 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 20 529,42 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 20 529,42 հազ. դրամ: Բյուջեի կատարողականը դրամային արտահայտությամբ կազմել էր նախատեսված տարեկան բյուջեի 86%:

**03.03.01.07 Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող
Փաստաբանների դպրոցի վերապատրաստման կարողությունների զարգացման
դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2015թ. կատարված ծախսերի ամփոփ
հաշվետվություն**

«ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Փաստաբանների դպրոցի վերապատրաստման կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի իրականացման համար նախատեսվել է ընդհանուր 260928,00 հազ. դրամ, որից՝ 217440,00 հազ. դրամը դրամաշնորհային միջոցներից և 43488,00 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներից: Ծրագրի ֆինանսավորումը կազմել է 221572,58 հազ. դրամ դրամաշնորհային միջոցներից, իսկ 30392,00 հազ. դրամը համաֆինանսավորման միջոցներից: Ծրագրի դրամարկղային ծախսը կազմել է 182599,30 հազ. դրամ դրամաշնորհային միջոցներից և 29287,00 հազ. դրամ համաֆինանսավորման միջոցներից: Բյուջեի կատարողականը դրամային արտահայտությամբ կազմում է նախատեսված տարեկան բյուջեի 81%:

Թերի իրացումների հիմնական պատճառն այն է, որ ծառայությունների մի մասը նպատակահարմար է գտնվել տեղափոխել հաջորդ տարի:

2014 թվականի ընթացքում այս ծրագրի շրջանակներում որևէ ծախս չի կատարվել: Տարեսկզբին ծրագրի ֆինանսավորումը կասեցվել է Համաշխարհային Բանկի կողմից համապատասխան մասնագետների բացակայության պատճառով և վերսկսվել 2014 թվականի սեպտեմբերին: 2014 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են խորհրդատվական ծառայությունների գնումների ընթացակարգեր, սակայն վճարումներ չեն իրականացվել:

08.03.02.09 Թարգմանչական ծառայություններ

2015 թվականին «Թարգմանչական ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է 185903.60 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 185903.60 հազ. դրամ: Թարգմանվել է 21871 էջ :

2014 թվականին «Թարգմանչական ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է 122533.90 հազ. դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 172533.90 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 172533.90 հազ. դրամ: Թարգմանվել է 20302 էջ:

09.05.02.04 ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում

«ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի գծով 2015 թվականին նախատեսվել է 344278.80 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 344278.80 հազ. դրամ: Գումարը նախատեսվում է ելնելով վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակից, ինչպես նաև դասընթացների տևողությունից:

2015 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակը կազմել է 2523 մարդ: 2014 թվականին մեկ դասընթացի տևողությունը եղել է 60 ակադեմիական ժամ, իսկ 2015 թվականին՝ 72 ակադեմիական ժամ:

«ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի գծով 2014 թվականին նախատեսվել է 344287.80 հազ. դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 344287.80 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 344278.80 հազ. դրամ: Գումարը նախատեսվում է ելնելով վերապատրաստվողների և հատուկ ուսուցում

անցնողների թվաքանակից: 2014 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակը կազմել է 3030 մարդ:

01.01.03.04 Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ

2015 թվականին «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» ծրագրի գծով ֆինանսավորումը կազմել է 23414.12 հազ. դրամ, իսկ դրամարկղային և փաստացի ծախսերը՝ 22851.60 հազ. դրամ, 2014 թվականին այս ծրագրի գծով ֆինանսավորումը կազմել է 24415.98 հազ. դրամ, իսկ դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 24142.88 հազ. դրամ:

01.01.03.03 Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն

2015 թվականին «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն» ծրագրի գծով ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը՝ 688.00 հազ. դրամ:

09.05.01.13 Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը

2015 թվականին «Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը» ծրագրի գծով նախատեսվել է 24988.50 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսերը 24988.50 հազ. դրամ իսկ փաստացի ծախսը կազմել է 23992.30 հազ. դրամ:

2014 թվականին «Աջակցություն իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը» ծրագրի գծով նախատեսվել է 20112.40 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսերը 20112.40 հազ. դրամ իսկ փաստացի ծախսը կազմել է 19276.10 հազ. դրամ :

2014 թվականի դրամարկղային ծախսի աճը պայմանավորված է 2014 թվականի 2-րդ կեսից աշխատավարձերի բարձրացմամբ:

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ 11.01.01.01

2015 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախարարությանը նախատեսվել է 225176.25 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 224413.48 հազ. դրամ, դրամարկղային ծախսը 218988,41 և փաստացի ծախսը կազմել է 296404,41 հազ. դրամ: Ստորև ներկայացվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 2014 թվականի հատկացումների մասին տեղեկանքը.

N	Որոշման համարը, ամիս, ամսաթիվ	Նպատակը	Նախատեսված	ֆինանսավորում	Դրամարկղային ծախս
1	490-Ա 14.05.2015թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	88112.93	88112.93	88078.18
2	327-Ն 26.03.2015թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	110000.00	104940.00	104940.00
3	735-Ն 02.07.2015թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	14029.69	8602.95	5711.46
4	1041-Ա 10.09.2015թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	38106.18	38106.18	38106.18
5	1129-Ն 01.10.2015թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	47880.30	47880.30	47880.30
6	1137-Ն 08.10.2015թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	90424.70	90424.70	90424.70
7	1440-Ա 10.12.2015թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	1905.32	1905.32	1905.32
8	1471-Ն 17.12.2015թ.	ՀՀ արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին	33000.00	33000.00	33000.00
Ընդամենը			423459.12	412972.38	410046.14

10.09.02.02 Պետական հիմնարկների և կազմակերպությունների

աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում

2015 թվականին «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծախսային ծրագրով ՀՀ արդարադատության նախարարության համակարգի աշխատակիցների համար նախահաշիվը կազմել է 283404,00 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 200784.00 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 198889.08 հազ. դրամ: Նշված ծրագրով գումար է տնտեսվել թափուր հաստիքների շարժունակության հաշվին:

2014 թվականին վերը նշված ծրագրով ՀՀ արդարադատության նախարարության համակարգի աշխատակիցների համար ճշտված նախահաշիվը կազմել է 283404,00 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 236049,18 հազ. դրամ: 2015 թվականի դրամարկղային ծախսի 15,74%-ով նվազումը 2014 թվականի նկատմամբ պայմանավորված է նրանով, որ 2015 թվականին ՀՀ Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» առողջապահական բաղադրիչը ուղղվել է ՀՀ առողջապահության նախարարությանը:

09.05.02.09

Վե ր ապատր սա տմ ա

Այս ծրագրի նպատակն է դատական ծառայողների և դատախազության աշխատակազմի պետական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման ապահովում:

2015 թվականին նախատեսվել է 267437.00 հազ. դրամ: ֆինանսավորման և դրամարկղային ծախսը կազմել է 267437.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 213441.10 հազ. դրամ: 2014 թվականին չօգտագործված գումարներից 36297.70 հազ. դրամը ՀՀ արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից ետ է փոխանցվել պետական բյուջե 2015 թվականին:

2014 թվականին <<Վերապատրաստման ծառայություններ>> ծրագրով նախատեսվել է 302896.90 հազ. դրամ, ճշտված նախահաշիվը կազմել է 294904.40 հազ. դրամ: Ֆինանսավորման և դրամարկղային ծախսը կազմել է 294904.40 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 204153.20 հազ. դրամ:

09.05.02.10 **Միևը նապախոթանկ տն ւ մ ստաց ո ղ**

ու ն կ ն ղ ի ը ն ե ղ ի կ ղ թ ա թ ռ շ ա կ

2015 թվականին նախատեսվել է 64620.00 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 41812,6 հազ. դրամ:

Քանի որ 2015 թվականի ունկընդիրների քանակը որոշվում է, 2014 թվականի ընթացքում հանձնված քննությունների արդյունքում, ինչի հիման վրա էլ 2015 թվականին նախատեսվել է 30 ունկնդիր, սակայն 2015 թվականի փետրվարի 6-ի << նախագահի թիվ <-203-Ա հրամանագրով դատավորների թեկնածությունների ցուցակը ետ է վերադարձվել Արդարադատության խորհուրդ նոր քննարկման: Քննարկման արդյունքում ունկընդիրների քանակը մինչև 2015 թվականի սեպտեմբերի 1-ը սահմանվել է 21 հոգի: Ուստի 9 ունկընդիր կրթաթոշակ 2015 թվականի ընթացքում տնտեսվել է:

2014 թվականին նախատեսվել է 33820,1 հազ. դրամ: ճշտված նախահաշիվը կազմել է 41812,6 հազ. դրամ: Ֆինանսավորում, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 41812,6 հազ. դրամ:

<< արդարադատության նախարարությունը ունի չորս **արտաբյուջետային հաշիվ**: Առաջինը բացվել է << կառավարության 29.05.2002թ. թիվ 632 որոշման համաձայն: 01.01.2016թ. դրությամբ մնացորդը գրոյացվել է:

Արդարադատության նախարարության երկրորդ արտաբյուջետային հաշիվը բացվել է Հայաստանի հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի թիվ 860-Ն որոշմամբ, որով հաստատվել է իրավաբանական անձանց պետական

գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ապոստիլ դնելու, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման հետ կապված լրացուցիչ վճարովի ծառայությունների ցանկը և վճարների չափերը: <<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում արտաբյուջետային միջոցների հաշվին>> ծրագրի նախահաշիվը հաստատվել է 2012 թվականի ապրիլի 12-ի թիվ 420-Ն և 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1334-Ն որոշումների համաձայն: 01.01.2015թ. արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 524,30 հազ. դրամ, 2015 թվականին այս արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 200478.32 հազ. դրամ, ծախսը կազմել է 196315.69 հազ. դրամ, 01.01.2016թ. մնացորդը կազմել է 4686.93 հազ. դրամ: Փաստացի ծախսի և նախահաշվով հաստատված ծախսերի տարբերությունը պայմանավորված է նրանով, որ անվանացանկով նախատեսված որոժ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար պայմանագրեր չեն կնքվել:

Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից իրականացվող թարգմանչի որակավորման ստուգման անցկացման ժամանակ թարգմանությունների ճշտությունն ստուգող փորձագետների փորձագիտական աշխատանքի դիմաց վճարումները դիմորդների կողմից ստանալու և փորձագետներին տալու նպատակով ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 393-Ա որոշման համաձայն թիվ 1 գանձապետական բաժանմունքում բացվել է արտաբյուջետային հաշիվ: Արտաբյուջետային հաշվի նախահաշիվը հաստատվել է 2012 թվականի օգոստոսի 30-ի թիվ 1095-Ն որոշման համաձայն: 2015 թվականին այս արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 168,00 հազ. դրամ, ծախսը կազմել է 147,00 հազ. դրամ:

Եվրոպայի խորհրդի կողմից <<Էլեկտրոնային մոնիթորինգի սարքավորումների փորձարկում քրեակատարողական հիմնարկների պիլոտային

ստորաբաժանումներում>> ծրագիրն իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային միջոցների տնօրինման համար 2015 թվականի հունիսի 25-ի ՀՀ կառավարության թիվ 705-Ա որոշման համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում բացվել է արտաբյուջետային հաշիվ: Այս ծրագրի նպատակն է փորձարկել էլեկտրոնային մոնիտորինգի տեխնոլոգիաների կիրառումը իրավախախտների և դատավարության սպասող ամբաստանյալների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

2015 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՀ կառավարության թիվ 1223-Ն որոշմամբ դրամաշնորհային ծրագրի իրականացման համար նախատեսվել է ընդհանուր 27 355,0 հազ. դրամ: Ծրագրի ֆինանսավորումը կազմել է 4088,3 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը կազմել է 4088,3 հազ. դրամ:

ԴԱՀԿ ծառայության արտաբյուջետային հաշիվը տնօրինվում է առանց նախահաշվի:

Կից ներկայացվում է նաև 2015 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից եկամուտների հավաքման մասին հաշվետվությունը: Ներկայացված հաշվետվության մեջ ստացված եկամուտների տարբերությունը ծրագրային ցուցանիշներից կայանում է նրանում, որ հաշվետվության մեջ արտացոլվել են 2015 թվականին ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից փաստացի կատարված գործողությունների դիմաց գանձված տուրքերի և եկամուտների գումարները: 2014 թվականի համեմատությամբ հավաքված եկամուտների տարբերությունը պայմանավորված է կատարված գործարքների քանակով: